ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՋՋԱՅԻՆՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ՝ 23.03.2017 ԹՎԱԿԱՆԻ N «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/4-Ա» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան **«18» «հուլիսի» 2018թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Գրիգորյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ.Ասատուրյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, ղեկավարվելով -- 04 հուլիսի 2018թ. թիվ 771-Ա ՀՀ կառավարության որոշմամբ և հիմք ընդունելով 23.03.2017թ. N «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/4-Ա» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3 կետը, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի N 1 Հավելվածում նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետ սահմանել մինչև 2018 թվականի հունիսի 01 ներառյալ:

1.2 Պահյմանագրի 4.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը 2017թ. համար կազմում է 3008000 (Երեք միլիոն ութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, իսկ 2018թ. առաջին կիսամյակի համար՝ 2813382 (Երկու միլիոն ութ հարյուր տասներեք հազար երեք հարյուր ութսուներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը» :

1.3 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածը կազմված են 2 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք.Երևան, Կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011019321
ՀՎՀՀ՝ 01506515

Աշխատակազմի
ղեկավար.....Ա.Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Տերյան 19, բն. 4
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ՝ 00024873

Կորպորատիվ վաճառքի
բաժնի ղեկավար՝.....Կ.Ասատուրյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված
« 23 » մարտի 2017 թ. կնքված
«ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/4-Ա» ծածկագրով պայմանագրի
« 18 » հուլիսի 2018 թ. կնքված
Համաձանագիր 1-ի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*													Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	64211130	Բջջային հեռախոսակապի ծառայություններ				1003200	1253800	1504400	1755000	2005600	2256200	2506800	2757400	3008000	**3008000**	-	-	-	-	-	-	2813382	2813382	2813382	2813382	2813382	2813382	**2813382**
Ընդամենը						**1003200**	**1253800**	**1504400**	**1755000**	**2005600**	**2256200**	**2506800**	**2757400**	**3008000**	**3008000**	-	-	-	-	-	-	**2813382**	**2813382**	**2813382**	**2813382**	**2813382**	**2813382**	**2813382**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք.Երևան, Կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011019321
ՀՎՀՀ՝ 01506515

Աշխատակազմի
ղեկավար ..... Ա.Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Տերյան 19, բն. 4
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ՝ 00024873

Կորպորատիվ վաճառքի
բաժնի ղեկավար .....Կ.Ասատուրյան
/ստորագրություն/